ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդվել է, հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովի հանդիպումը՝ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկու և կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանի մասնակցությամբ:

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ՝ Ստեփանակերտից վերադառնալուց հետո Արմենպրեսի թղթակիցը հանդիպում ունեցավ նրա հետ և խնդրեց պատասխանել մի շարք հարցերի:

— Սուրեն Գուրգենովիչ, սա արդեն Ձեր երկրորդ այցելությունն է Լեռնային Ղարաբաղ: Ուղևորության նպատակները հայտնի են ՏԱՍՍ-ի հաղորդագրությունից: Ի՞նչ տպավորություն ստացաք այդ ուղևորությունից:

— Ռեգիոնում ստեղծված բարդ ու լարված իրադրության պայմաններում, երբ երկու հարևան ժողովուրդների փոխհարաբերությունների վրա, ցավոք, ընկել է օտարացման ստվերը, երբ գրեթե ամեն օր պրոբլեմներ են ծագում, հանրապետությունների ղեկավարության ներկայացուցիչների կանոնավոր հանդիպումները հատկապես անհրաժեշտ են: Նման հանդիպումներն արդեն ավանդույթ են դառնում: Սա արդեն Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովի հետ երրորդ հանդիպումն է և երկրորդը՝ Արցախի հողում:

Տպավորություններս շատ-շատ են, և դրանց մասին կարելի է երկար պատմել: Ի դեպ, «տպավորություն» բառն անկարող է ամենայն խորությամբ արտահայտել զգացմունքների այն ամբողջ խորությունը, այն հուզմունքը, որ ամեն անգամ զգում ես, ոտք դնելով այդ հինավուրց հողը: Չէ որ մեզ՝ հայերիս համար Լեռնային Ղարաբաղը՝ Արցախը, լոկ պատմական կամ աշխարհագրական հասկացություն չէ: Այստեղ դարերով ապրել և այժմ էլ ապրում է մի հպարտ ու իմաստուն, սեփական դառը քրտինքով իր հոգևոր ու հանապազօրյա հացը վաստակող ժողովուրդ՝ մեր հայրենակիցները: Բայց եթե, այնուամենայնիվ, իմ ներկա ուղևորությունը Ստեփանակերտ համեմատելու լինենք հուլիսյան այցելության հետ, ապա այժմ առաջին բանը, որ աչքի էր զարնում, մարդկանց դեմքերին հայտնված ժպիտն է: Դա արիական մարդկանց ժպիտ է, որը, սակայն, ի վիճակի չէ թաքցնել հոգնությունն ու տագնապը: Բայց գլխավորն այն է, որ մարդիկ ասես ավելի վստահ են դարձել, տրամադրվել լավատեսորեն, թեև ղարաբաղցիներին այդ հատկանիշները միշտ էլ բնորոշ են եղել:

— Մասսայական ինֆորմացիայի միջոցները հաղորդեցին, որ հանդիպման ժամանակ հատուկ ուշադրություն է նվիրվել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման կատարման ընթացքի քննարկմանը: Հնարավոր չէ՞ արդյոք ավելի մանրամասն տեղեկություններ իմանալ կուսակցության ու կառավարության այդ որոշման կատարմանը մեր հանրապետության մասնակցության մասին:

— Իհարկե: Ես արդեն ասել եմ և հարկ եմ համարում վերստին կրկնել՝ ժամանակն է, որ մենք բոլորս, այսպես ասած, պլատոնական հայրենասիրությունից անցնենք գործնական հայրենասիրության, պրակտիկ գործերի: Ես դարձյալ համոզվեցի, որ Լեռնային Ղարաբաղում խիստ ըզգացվում է մեր օգնության կարիքը: Աշխատավորների կյանքի որակի բարձրացումը, մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը ոչ թե խոչընդոտներ են, այլ ընդհակառակն, հույժ էական նախադրյալներ Լեռնային Ղա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)